Արձանագրություն N 3

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան, Վրացյան 73, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ	28.06.2017թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Արտակ Պողոսյանը, անդամներ՝ Արմեն Կուլախսզյանը, Հասմիկ Իփեքչյանը և քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ

Օրակարգ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման վերաբերյալ որոշում:
2. «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատում և 1-ին և 2-րդ կետերի հիման վրա ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:
3. Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

1. **<u>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման վերաբերյալ որոշում:</u>**

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանը 23.06.2017թ. հարցում ներկայացրեց (կցվում է) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի

գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Մինչև սահմանված ժամկետի ավարտը պատասխան չստացվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից և հանձնաժողովը որոշեց «Թրավելոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող և «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համարել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. **<u>Առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի և ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ</u>**

«Թրավելոն» ՍՊԸ-ն 27.06.2017թ. ներկայացրեց պահանջվող փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և լրացնելով գնահատման թերթիկները (կցվում են), որոշեց՝ գնահատման արդյունքները համարել բավարար և «Թրավելոն» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

3. **<u>Պայմագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ</u>**

Հանձնաժողովի նախագահ Ա. Պողոսյանն առաջարկեց օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել «Թրավելոն» ՍՊԸ-ին: Հանձնաժողովը միաձայն ընդունեց Ա. Պողոսյանի առաջարկը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Պողոսյան

անդամներ՝ _____ Ա. Կուլախսզյան

_____ Հ. Իփեքչյան

քարտուղար՝ _____ Լ. Գևորգյան